

# ԲԱՅ ԼԱՄԱԿ Հ. Հ.-Ի ԼԱԽԱԳԱՀ՝ ՊԱՐՈՆ ՍԵՐՇ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Posted on January 17, 2016 by Keghart



Category: [Opinions](#)



Մեծարգո Պարոն Լախազահ,

Ես գիտեմ, որ անօգուտ է ձեզ բաց կամակ գրելը, գիտեմ, որ այն Ձեզ չի հասնելու և դուք այն չեք կարդալու: Գիտեմ նաև, ինչ որ գրելու եմ, դուք այդ բոլորից ավելի լավ գիտեք, գիտեք դրանց  պատճառները, գուցե և որպես հայ, որպես հայր, որպես Արցախի ազատագրական պատերազմում Ձեր մեծ ավանդի շնորհիվ, շատ եք անհանգստանում, սակայն ելք չեք տեսնում, կամ Հայաստանի վերնախավը և Ձեր շրջապատը այնքան են Ձեզ ներքաշել իրենց մեքենայությունների ոլորտում, որից դուրս գալը այլևս անհնար է, գուցե և այդ պատճառով անհանգստանում եք, բայց որևէ ելք, կամ ուղղումների հնարավորություն չեք տեսնում: Նման եզրակացություն ինձ մոտ, և ոչ միայն ինձ մոտ, առաջացավ և ամրապնդվեց Բեռլինում, տեղի հայության հանդիպման ժամանակ Ձեր արած ակամայից խոստովանությունը լսելուց հետո: Իմ այն քննադատությունից հետո, «որ Հայաստանում անօրինականությունների առկայության պատճառով, սփյուռքահայերը չեն կարողանում այնտեղ ներդրումներ անել», դուք պատասխանեցիք.

*«Եկեք, ես ձեզ կնշանակեմ պատասխանատու անձ, մի օր էլ չեք դիմանա:»*

Մեծարգո Պարոն Լախազահ,

Ես գիտեմ, որ անօգուտ է ձեզ բաց կամակ գրելը, գիտեմ, որ այն Ձեզ չի հասնելու և դուք այն չեք կարդալու: Գիտեմ նաև, ինչ որ գրելու եմ, դուք այդ բոլորից ավելի լավ գիտեք, գիտեք դրանց  պատճառները, գուցե և որպես հայ, որպես հայր, որպես Արցախի ազատագրական պատերազմում Ձեր մեծ ավանդի շնորհիվ, շատ եք անհանգստանում, սակայն ելք չեք տեսնում, կամ Հայաստանի վերնախավը և Ձեր շրջապատը այնքան են Ձեզ ներքաշել իրենց մեքենայությունների ոլորտում, որից դուրս գալը այլևս անհնար է, գուցե և այդ պատճառով անհանգստանում եք, բայց որևէ ելք, կամ ուղղումների հնարավորություն չեք տեսնում: Նման եզրակացություն ինձ մոտ, և ոչ միայն ինձ մոտ, առաջացավ և ամրապնդվեց Բեռլինում, տեղի հայության հանդիպման ժամանակ Ձեր արած ակամայից խոստովանությունը լսելուց հետո: Իմ այն քննադատությունից հետո, «որ Հայաստանում անօրինականությունների առկայության պատճառով, սփյուռքահայերը չեն կարողանում այնտեղ ներդրումներ անել», դուք պատասխանեցիք.

*«Եկեք, ես ձեզ կնշանակեմ պատասխանատու անձ, մի օր էլ չեք դիմանա:»*

Իրոք որ Ձեր ակամայից արած նման անկեղծ խոստովանությունը շատ բան է ասում, շատ ճշմարտությունների վրա է լույս սփռում: Դրանից կարելի է եզրակացնել, որ վերևներում անձերի միջև, այս կամ այն իշխանական աթոռը զբաղեցնելու, իշխանություն, ազդեցություն բանեցնելու և երկրում հաստատվելիք այս կամ այն օրենքի ընդունման և գործադրման ընթացքում, անողոք պայքար է գնում: Թեև այդ պայքարի անմիջական զոհը՝ հասարակ ժողովուրդն է, բայց նրան երբեք հնարավորություն չի տրվում, հաղորդակից լինել կուլիսների ետևում թաքնված այդ պայքարի ընթացքին և հարկ եղած դեպքում, երբ այդ պայքարը վնասում է երկրին: Որովհետև նրա միակ իրավունքը՝ ընտրությունների միջոցով ազդեցություն բանեցնել այդ պայքարի ընթացքին, տարբեր

մեթոդներով խլված է նրանից, որը հատուկ է ոչ դեմոկրատական երկրներին: Իսկ բոլորը գիտեն, հենց դա էլ չարիքներից մեծագույնն է, որը կարող է պատահել մի երկրի քաղաքական մթնոլորտի, տնտեսական զարգացման և ապագայի համար: Կատարվում է այն, ինչը չպետք է կատարվի: Իշխանությունների կողմից խափանված և տարեց-տարի ավելի է խափանվում այն մեխանիզմը, որը որպես ժողովրդի անձեռնմխելի իրավունք, սահմանադրությամբ հաստատված է, որին ժողովուրդը կարիքի դեպքում պետք է որ գործադրի, այն է իր քվեի միջոցով և խաղաղ պայմաններում, հասնել ինքնամաքրման, իշխանափոխության:

2015 Թվականի տարեմուտին հիշենք Պարույր Սևակի պատգամը.

*«Մաքրություն է պետք, մաքրություն բոլորին»:*

Մի քանի տարի առաջ Եվրոպայի Խորհրդի խորհրդարանական վեհաժողովում դուք հայտարարեցիք.

*«Արդեն իսկ ընդունվել է «Հանրային ծառայության մասին» օրենքը, որը հնարավորություն կտա ապահովել 600-ից ավելի բարձրաստիճան հանրային ծառայողների ու նրանց փոխկապակցված անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման հրապարակայնությունը, շահերի բախման հայտնաբերումն ու Էթիկայի կանոնների պահպանումը»:*

Նաև `

*«Մենք սովորում ենք լսել ու հարգել միմյանց կարծիքը:*

*Սովորում և մեզանում քայլ առ քայլ արմատավորում ենք, որ իշխանությունն ու ընդդիմությունը թշնամիներ չեն, և պարտադիր չէ, որ ուժեղն իր ուժը ցույց տալու համար անպայման տրորի դիմացիներն»:*

*Մենք հանդուժողականություն ենք սովորում և երկխոսության մշակույթ ձևավորում:*

*Սովորում ենք վիրավորանքին վիրավորանքով չպատասխանել ու կարևորագույն հարցերի շուրջ շատերի կարծիքը հարցնել:*

*Սովորում ենք մեծարել ու գնահատել նախկին առաջնորդների վաստակը և չենք ամաչում առողջ քննադատությանն ականջալուր լինելով փոխել մեր իսկ կայացրած որոշումները:*

*Մենք սովորում ենք ապրել այլ կանոններով:*

*Ո՞րչ հասարակությամբ ենք սովորում:*

Այո՛, այո՛, իսկ որո՞նք են այդ կանոնները: Բոլոր հնարավոր միջոցներով, փոխել՝ սահմանադրությունը: Այո՛, համաձայն եմ, երկրում խորհրդարանական իշխանության հաստատումը, ավելի դեմոկրատիա է նշանակում: Սակայն բոլորը գիտեն, թե դա ինչու և ինչպես է արվում: Ժամանակին գերմանացի մեծ սոցիալ-դեմոկրատ՝ Վիլի Բրանդը, որպես նոր ընտրված կանցլեր, խորհրդարանում հայտարարեց.

*«Ավելի շատ դեմոկրատիա համարձակվել»:*

Բոլորը հասկացան նրան: Այո՛, արժե, երկրի զարգացման և ժողովրդի բարօրության համար, համարձակվել, ավելի շատ դեմոկրատիա կիրառել: Հենց դա էլ նկատի ունեւր նա: Իսկ Ձեր հավակնւթյո՞ւնը: Իսկ ինչո՞ւ սահմանադրւթյան փոփոխւթյուն: Այն ի՞նչ գաղափար, միտւում, կամ հեռանկար է իր մեջ պարունակւում:

Դուք Եվրոպայի խորհրդարանւում հայտարարւում եք նաև.

*«Մշակվում է 2012-2014 թվականների դատաիրավական բարեփոխումների ծրագիրը, որը պետք է իսկապես լուծի դատարանների անկախւթյան երաշխավորման՝ առաջնահերթ համարվող խնդիրը»:*

Ժամանակին որոշ միամիտներիս մոտ այն հույսն էր առաջացել, որ նախագահի վերոհիշյալ խոսքերը, ասված Եվրոպական այդ բարձր ատյանւում, միայն խոսքեր չեն մնալու: Կարող է լինել, որ դրանց ետևում թաքնված լինեն լուրջ մտադրւթյուններ, կարող է լինել, որ որոշ գործողւթյուններ հետևեն այդ խոստւումների, սակայն կյանքը ցույց տվեց, որ այո, կարելի է նաև այդպես: Դրսւում Եվրոպայի երկրներին գեղեցիկ խոսքերով հավատացնել, որ մտադրւթյուններ կան, թե հետո ի՞նչ կլինի, ո՞վ է դրանց հետևելու: Ի՞նչ հայ ժողովուրդը, դե՛, ի՞նչ կարևոր է նա: Ո՞վ է նրան հաշվի առնւում: Կարևորը Եվրոպայի խորհրդարանի պատգամավորների աչքերին փոշի փչելն է, կարևորը, նրանց կարծիքն է, նրանց վստահւթյունը և դրա հետևանքով նրանց օգնւթյուն ստանալն է, թե երկրւում ինչպիսի՞ իրական պայմաններ են տիրւում, ոչ ոքին չի էլ հետաքրքրւում:

Այդ երեք տարի առաջ էր, Դուք Ձեր մի հարցազրույցւում, անդրադառնալով մամուլւում հայտնված հայկական բանակին վերաբերող որոշ լուրերին, ասւում եք՝

*«Ես հպարտանւում եմ մեր բանակով»:*

Այդտեղ Դուք ասւում եք նաև, որ դուք զգվւում եք չարակամ մարդկանց ասեկոսներից, փորձւում եք ելք գտնել և բանակւում տիրող բացասական երևույթները կապւում եք հասարակւթյան հետ, ասելով՝ «Բանակը հասարակւթյան հայելին է», շատ ճիշտ եք: Ուրեմն բանակւում էլ են տիրւում այն բոլոր բացասական երևույթները, որ տիրւում են երկրւում, ուրեմն բանակւում էլ է տիրւթյուն անւում կաշառքը, զոռբաների մահակը և թույլերի, խեղճերի, անօգնականների ճիչը երկինք հասնւում: Դուք՝ չանդրադառնալով, ակամայից, այդ Ձեր մի նախադասւթյամբ, շատ բան եք խոստովանւում և արդեն ընթերցողին հայտնի է դառնւում, թե իրոք, ինչ իրավիճակ է տիրւում բանակւում:

Ինչ խոսք, կյանքը Ձեր նկատմամբ ավելի բարյացակամ է գտնվել և Դուք Ձեր այլևայլ շնորհքների, կարողւթյունների շնորհիվ, դարձել եք Հայաստանի Հանրապետւթյան Նախագահ, նաև ի պաշտոնե, հայկական բանակի գլխավոր հրամանատար և շատ ավելի լավ պետք է իրագեկ լինեք, թե ի՞նչ է կատարվւում հայկական բանակւում, թե որքա՞ն են իրականին համապատասխանւում նման ասեկոսները, որոնցից, Ձեր ասելով, դուք զգվւում եք: Դուք իրավունք ունեք, ոչ միայն դուք, այլև յուրաքանչյուր հայ պետք է հպարտանա հայկական բանակով, ավելի շուտ այն անձնագոհության պատրաստ մարդկանցով, որոնցից մեկն էլ Դուք էիք, որ ստեղծեցին այդ բանակը և դեռ լրիվ չկազմակերպված, Արցախւում նման փայլուն հաղթանակ տարան: Ու նաև ամեն մի հայ պետք է

զգվի չարակամ մարդկանցից և բանակի հեղինակությունը վնասող, ստահող լուրեր տարածողներից: Այստեղ ոչ ոք Ձեզ առարկել չի կարող, բայց յուրաքանչյուր քաղաքակիրթ երկրում, հասարակությունը իրավունքն և պահանջն ունի, ճշմարտությունը լսել, իրավունքն ունի իր պատգամավորների միջոցով, հարցումներ ուղղել պետական համպատասխան կառույցներին և ազնիվ, ճշմարիտ պատասխան ստանալ: Միայն այդ պարագայում է, որ կլռեին չարակամները, կվերանային ասեկոսները, այն, ինչը Հայաստանում հնարավոր չէ անել և չի արվում:

Ի՞նչ կասեք դրան, սրանք բամբասանք չեն, չարակամ մարդու ասեկոսներ չեն:

- Իրականում Դուք նման պայմանների բացակայությունից պետք է զզվեիք:
- Պետք է զզվեիք այն մթնոլորտի առկայությունից`
- ուր, առողջ, շինիչ, ազատ քննադատական խոսքը տորբետահարվում է.
- ուր, միայն իշխանության մոտ կանգնած անձինք` ասելու, ապրելու, կառուցելու, երկրի հարստություններին տիրանալու հնարավորություն ու իրավունք ունեն.
- ուր, այնպիսի աղաղակող սոցիալական ճնշում ու կարիք գոյություն ունի, որ հայ կանայք այլ ելք չեն տեսնում, բացի քել ամեն ինչ, ամենին` հայրենիք, ազգ, երեխա, ընտանիք, պատիվ, և այլ երկրներ մարմնավաճառության գնալ:

- Դուք պետք է զզվեիք նաև նման իրականությունից և երկրում ազատ խոսքի բացակայության, իշխանությունների ոչ թափանցիկ քաղաքականության և իհարկե նաև ոչ անկախ դատարանի և իվերջո ոչ անկախ գործադիր մարմինների առկայության պատճառով: Որպեսզի աշխատավորների, խեղճերի, թույլերի, անօգնականների, կարիքավոր երեխաների, մայրերի և ծերունիների աղաղակները և օգնության կանչերը անպատասխան չմնային: Որպեսզի երկիրը չդատարկվեր, որպեսզի գյուղացիները մասսայաբար չլքեին այն հողը, ուր նրանց նախնիները, նույնիսկ օսմանյան և պարսկական դաժան ճնշման պայմաններում, մշակել են կարողացել, որոնք էլ անասելի ծանր զրկանքների, բռնությունների պայմաններում կարողացել են պահել ազգը, լեզուն, երկիրը և ներկա սերնդին և Ձեզ են հասցրել:

Եթե չեմ սխալվում Շիրվանզադեն ասել է.

«Ազգը և լեզուն պահում են գյուղացիները»:

Իսկ ռուս գրող` Իվան Վասիլիևը գրում է.

«Գյուղի կործանումը, նշանակում է երկրի կործանում»:

Արդյո՞ք երբևէ հետաքրքրվել եք, թե ի՞նչ վիճակում են գտնվում հայկական գյուղերը սահմանային գոտիներում և այլուր: Այդ ե՞րբ էր, որ Դուք հայտարարեցիք. «Աշխարհը մենք կանգնելու ենք հայ գյուղացու կողքին»: Ա՞յդ էր Ձեր խոստացածը, Թուրքիայից լուրիկ, այլ մթերքներ, ապրանքներ ներմուծե՞լ և այդպիսով սնանկացնե՞լ Հայաստանի գյուղացիությանը, հայ արհեստավորին:

Այս ամենը տեսնելով, ապրելով, հապա հայ ժողովուրդը ի՞նչ անի, ո՞ւմ դուռը թակի, ո՞ւմ մոտ

զանգատի գնա...

Այո մեծարգո Բարոն Նախագահ, Դուք իրականում պետք է անհանգստանալիք և զզվեիք այդ ամենից, ինչպես ամեն մի քաղաքացի և ամեն մի հայ, ով հետաքրքրված է հայության և Հայաստանի ապագայով: Եվ քանի որ դուք եք զբաղեցնում երկրի ամենաբարձր իշխանական աթոռը և օժտված եք ամենալայն իրավունքներով, ապա նա սպասում է, որ Դուք այն գործադրեիք և գործադրեք նրա բարօրության համար, հոգ տանեիք, որ Հայաստանը դառնար մի երկիր, որտեղ ապրել կցանկանալին, ոչ միայն հայերը, այլ, նաև օտարերկրացիներ, և եթե Ձեզ խանգարողներ լինեին, ապա պետք է որ Ձեր հենարանը լիներ ժողովուրդը և Ձեր թիկունքում ունենալիք նրան և շահեիք նրա աջակցությունը:

Երբեմն ցանկանալով Հայաստանի իշխանություններին արդարացնել, Դուք, ասել եք, որ երկիրը փոքր է, աղքատ և պետությունը միջոցներ չունի: Սա հեշտ փախուստ է, իրականությունը չխոստովանելու համար: Հապա ինչպե՞ս է լինում, որ հենց այդ աղքատ երկրում, որոշները մի քանի տարում ապարանքներ են կառուցում, այլոք միլիոնատեր դառնում, իսկ շատերը մնում են օրվա հացի կարոտ:

Ոչ ոք չի կարող Հայաստանի իշխանություններից պահանջել, որպեսզի նրանք անսխալ աշխատեն, բայց յուրաքանչյուր հայ սպասում է և իրավունքն ունի պահանջել, որ նրանք ճշգրիտ և ճշմարիտ լինեն, թե բանիվ և թե գործով, ինչպես նաև ազնիվ լինեն, իրենց կատարած աշխատանքների ընթացքում:

**Այս տարի, երբ համայն աշխարհի հայությունը նշեց եղեռնի 100-ամյակը, ապա հրամայական պարտավորություն է դրվում բոլորիս, նաև Ձեր վրա, անդրադառնալ նաև այն եղեռնագործությանը, որը անկախությունից հետո, Հայաստանի իշխանությունների և նրանց հովանու տակ անցած, որոշ անձնավորությունների կողմից, իրագործվել և իրագործվում է երկրի բնակչության, բնության, ընդերքի ու Էկոլոգիայի նկատմամբ: Թե ինչո՞ւ զարմանալի անտարբերությամբ և շահամոլությամբ քսանհինգ տարի է ինչ հետդարձ քայլ է արվում, հասարակ աշխատավոր ժողովրդի, գյուղացիության՝ կենսամակարդի, կրթության, սոցիալ- կենցաղային, բնակարաններով ապահովման բնագավառներում: Քանդվել և քանդվում է անցյալը, փոխարենը ոչ մի առաջընթաց քայլ չանելով: Տիպիկ հայկական բնավորություն: Միթե՞ պետք է հայ վերնախավը ավելորդ անգամ աշխարհին ցույց տա, փաստի, որ ինքը երբեք ի վիճակի չի եղել և ի վիճակի չէ, երկիր ունենալ և երկիր կառավարել...**

Ինձ թվում է մենք ազգովին խարխափում ենք մթության մեջ և եթե փորձենք անաչառ լինել, ապա միշտ Էլ այդպես է եղել, նաև հարյուր տարի առաջ, նաև այսօր, եղեռնի հարյուրամյակի տարում: Հայաստանի իշխանավորները պետական հանձնախումբ են ստեղծում, հռչակագիր են գրում, համայն մարդկությանը պահանջներ են ներկայացնում, մյուս կողմից, հենց իրենց բանեցրած քաղաքականության պատճառով, դատարկվում է Հայաստանը, Արցախը, որի ազատագրման համար այդքան երիտասարդ զոհեր պահանջվեցին և օր-օրի վտանգվում է այդ երկու երկրամասերի ապագան: Նրանք «արի տուն» կոչեր և ամպագոռգոռ ճառեր ու գրություններ են հղում առ աշխարհ,

**սակայն հենց իրենց աչքի առաջ անգոր են գտնվում, Սիրիահայերին պաշտպանել պետական չինովնիկների ոտնձգություններից, կեղեքումներից: Դուք և Հայաստանի մյուս իշխանավորները պետք է իրենց հարց տան, թե ինչո՞ւ է սփյուռքահայը կարողացել ու կարողանում, աշխարհի բոլոր ծայրերում ներդնումներ անել, հաստատվել, բայց Հայաստանում չի կարողացել ու չի կարողանում:**

**Մյուս կողմից սփյուռքի պատմագետները, հարգելի պրոֆեսորները հատորներ են գրում, եղեռնը փաստելու, մարդկության խիղճը վկայակոչելու, թուրքին պահանջներ ներկայացնելու համար, սակայն միևնույն ժամանակ չեն ցանկանում տեսնել, թե ինչ է կատարվում Հայաստանում, կամ էլ տեսնում և լռում են, Ձեզանից և մյուս հայ իշխանավորներից չեն հարցնում, թե այդ ի՞նչ եք անում, դեպի ո՞ւր եք գլորում երկիրը և հայ ժողովրդին, չլինի թե Ձեր և մյուս իշխանավորների «խաթրին» դիպչեն, չլինի թե՞...**

Թե ինչո՞ւ են այս ամենը Ձեզ գրում, լավ իմանալով, որ դա ոչ մի դրական արձագանքի չի արժանանա: Իրականում սա մենության պահի **անզորության ճիչ է:** Այն գիտակցության արգասիքը, որ դուք էլ բոլոր ոչ դեմոկրատ երկրների իշխանավորների նման, փորձեր եք անում, բոլոր հնարավոր միջոցներով, կառչել իշխանական աթոռին: Վերջին քվեարկության գործողությունը դա է հուշում, իսկ դա երկրին ոչ մի լավ բան չի խոստանում, իսկ իրերի նման ընթացքը, ոչ մի երկրում լավ ապագա չի ունեցել: Բոլորիս պարզ է, որ այդպիսով ներկայիս հայության և երկրի ապագան վտանգող պայմանները, շարունակվելու և հակասությունները ավելի են խորանալու: Նման հեռանկարից տազնապած, մեզ՝ սփյուռքահայերիս ոչ մի այլ միջոց չի տրված, որպեսզի մենք կարողանանք այդպիսով մեր բողոքը հայտնել: **Ուրեմն մեզ մնում է վերջին անհույս քայլը՝ բաց նամակով դիմել հանրությանը, հոգ չէ, թե այն իր հասցեատիրոջը չի հասնելու...**

Հարգանքներով՝

Սամվել Հովասափյան

Բեռլին, դեկտեմբեր 2015

